ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

03.10.2023 թվականին կնքված **N ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/140-1** գնման պայմանագրի

ք. Երևան «16» 04 2024թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը, ի դեմս գլխավոր տնօրենի ժ/պ՝ Բ. Սեդրակյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՆՈՐԱԿ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Հ. Կատվալյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 03.10.2023թ. կնքված N ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/140-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.15 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հատկացված **47,876,400.00 (քառասունյոթ միլիոն ութ հարյուր յոթանասունվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ,** շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի հավելված 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083324940100
ՀՎՀՀ 00000911

Գլխավոր տնօրենի ժ/պ―――――― Բ. Սեդրակյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՆՈՐԱԿ» ՍՊԸ
Արարատի մարզ գ.Մխչյան 25փ թիվ 2
Ակբա Բանկ ԲԲԸ
Հ/Հ 220013330737000
ՀՎՀՀ 04203321

տնօրեն――――――――Հ. Կատվալյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1*
*«03» հոկտեմբերի 2023թ. կնքված*
*N ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/140-1 ծածկագրով պայմանագրի*
*« 16» 04 2024թ. կնքված*
*թիվ 1 համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Ապրանքի անվանումը | Չ/մ | Ընդհանուր քանակը | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | Ընդհանուր գինը |
| 1 | 31211410/501 | մալուխների միացման կետ «կոմպենսատորային արկղ» | հատ | 195 | - | - | - | 47,876,400.00 | 47,876,400.00 | 47,876,400.00 | 47,876,400.00 | 47,876,400.00 | 47,876,400.00 | 47,876,400.00 | 47,876,400.00 | 47,876,400.00 | 47,876,400.00 |

* Ծանոթություն. Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով և հրավերում ներկայացվելու են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվելու է կոնկրետ գումարի չափ:

**ԳՆՈՐԴ**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083324940100
ՀՎՀՀ 00000911

Գլխավոր տնօրենի ժ/պ--------------- Բ. Սեդրակյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՆՈՐԱԿ» ՍՊԸ
Արարատի մարզ գ.Մխչյան 25փ թիվ 2
Ակբա Բանկ ԲԲԸ
Հ/Հ 220013330737000
ՀՎՀՀ 04203321

տնօրեն-----------------Հ. Կատվալյան
/ստորագրություն/
Կ.Տ